Խորհուրդներ Կալիֆոռնիա նահանգի Վերապատրաստման նպաստների պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Դուք գործազուրկ եք և ցանկանում եք կատարելագործել ձեր հմտությունները կամ գտնել նոր զբաղմունք: Կալիֆոռնիա նահանգի Վերապատրաստման նպաստները կարող են հենց ձեզ համար լինել:

Ի՞ՆՉ ԵՆ ԿԱԼԻՖՈՌՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԸ:

Կալիֆոռնիա նահանգի Վերապատրաստման նպաստները (California Training Benefits, CTB) հնարավորություն են տալիս Գործազրկության ապահովագրության (Unemployment Insurance, UI) նպաստներ ստանալու ընթացքում շարունակելու ձեր կրթությունը, կատարելագործելու հմտությունները կամ նոր արհեստ սովորելու՝ հաճախելով Զբաղվածության զարգացման վարչության (Employment Development Department, EDD) կողմից հաստատված դպրոցական կամ վերապատրաստական ծրագրի:

Մասնակցելու նկատառումները

CTB-ի իրավունակ մասնակիցները կարող են՝

- կատարելագործել ունեցած գիտելիքներն ու հմտությունները.
- նոր հմտություններ զարգացնել գրավիչ աշխատանքային ուղու համար.
- վերապատրաստման դասընթացի երկարաձգման հաստատման դեպքում հավանաբար ստանալ UI նպաստների լրացուցիչ շաբաթներ:

Եթե ստանաք CTB-ին մասնակցելու հաստատում, EDD-ի կողմից հաստատված դպրոցական կամ վերապատրաստական ծրագրի հաճախելու ընթացքում կազատվեք UI-ի համար ներկայացվող իրավունակության շաբաթական պահանջներից, որոնք վերաբերում են *աշխատանքի համար պատրաստ լինելուն, ակտիվորեն աշխատանք փնտրելուն և աշխատանք ընդունելուն*:

ՉՈՐՍ ՔԱՅԼ՝ CTB-Ի ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

CTB-ին մասնակցելու համար պետք է ունենաք ընթացիկ ու վավերական UI հայց և բավարարեք UI-ի համար ներկայացվող իրավունակության բոլոր մյուս պահանջները:

ՔԱՅԼ 1 - Հայտնեք CTB-ին մասնակցելու ձեր հետաքրքրվածության մասին

CTB-ին մասնակցելու ձեր հետաքրքրվածության մասին հայտնելու համար հնարավորինս շուտ դիմեք EDD-ին առցանց, հեռախոսով կամ անձամբ ներկայանալով America's Job Center of California[SM]-ի (AJCC) գրասենյակ:

Կարևոր է. Որպեսզի քննության առնվի վերապատրաստման դասընթացի երկարաձգման հնարավորությունը, պետք է EDD-ին դիմեք նախքան UI նպաստների 16-րդ շաբաթվա վճարումները ստանալը:

ՔԱՅԼ 2 - Գտեք պահանջների համապատասխանություն ապահովող ծրագիր

Կարող եք ուսումնասիրել տարբեր դպրոցական և վերապատրաստական ծրագրեր, որոնք համապատասխանում են ձեր մասնագիտական զարգացման նպատակներին և ձեզ իրավազոր են դարձնում CTB-ի համար: *Ձեզ հարմար որակավորված վերապատրաստական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար տես* **«Որակավորված վերապատրաստական ծրագրերի տեսակներ»** *բաժինը*:

Եթե հաճախում եք կառավարության կազմակերպած որոշակի ծրագրերի կամ գործատուի, առևտրային կազմակերպության կամ արհմիության կողմից հովանավորվող վերապատրաստման դասընթացների, ապա հնարավոր է, որ նախահաստատված լինեք CTB-ի համար: Այնուամենայնիվ, EDD-ին անհրաժեշտ կլինի ստուգել վերապատրաստման դասընթացում ձեր գրանցված լինելն ու հաճախելն այդ դասընթացին: Եթե ինքնուրույն եք կազմակերպում ձեր մասնակցությունը վերապատրաստման դասընթացին, պետք է CTB-ի պահանջները բավարարելու համար համապատասխանեք **բոլոր** չափանիշներին:

ՔԱՅԼ 3 - Զեկուցեք հաճախման մեկնարկի մասին

Եթե ներկայումս հաճախում եք դպրոցական կամ վերապատրաստական ծրագրի, հաճախման մասին զեկուցեք EDD-ին, երբ UI հայց եք ներկայացնում կամ վերաբացում: Հակառակ դեպքում, նպաստների համար իրավունակությունը հաստատելու ժամանակ, EDD-ին տեղեկացրեք այն շաբաթվա ընթացքում, երբ **սկսում եք** հաճախել դպրոց կամ վերապատրաստման դասընթացի: EDD-ին կարող եք դիմել նաև առցանց, հեռախոսով կամ անձամբ ներկայանալով AJCC-ի տեղական գրասենյակ: Ընդամենը հարկավոր է ձեր հաճախման մասին հայտնել *այն շաբաթվա ընթացքում, երբ սկսել եք հաճախել դպրոց կամ վերապատրաստման դասընթացի*:

** «Զբաղվածության ոլորտում նորարարությունների և նոր հնարավորությունների մասին» օրենքով (Workforce Innovation and Opportunity Act, WIOA) կամ Առևտրի կարգավորման հարցերում օգնության ծրագրով (Trade Adjustment Assistance, TAA) նախատեսված վերապատրաստման համար դիմեք AJCC-ում ձեր ներկայացուցչին՝ հաճախման մասին հայտնելու համար:*

ՔԱՅԼ 4 - Տրամադրեք տեղեկատվություն վերապատրաստման մասին

EDD-ին անհրաժեշտ կլինի տեղեկատվություն ձեր դպրոցական կամ վերապատրաստական ծրագրի մասին, որպեսզի որոշի CTB-ին մասնակցելու ձեր իրավունակությունը: Հնարավոր է, որ հարցաթերթիկ ստանաք փոստով, կամ նշանակվի հեռախոսային հարցազրույց EDD-ի ներկայացուցչի հետ:

Պատրաստ եղեք տրամադրելու հաճախման ամսաթվերն ու ժամանակացույցը, ներառյալ ընդմիջումները կամ արձակուրդները, ձեր վերապատրաստման մասնագիտությունը կամ մասնագիտական զարգացման նպատակները և տեղեկություններ դպրոցի կամ վերապատրաստման դասընթացի անցկացման վայրի մասին: Կարող է պահանջվել հաճախման ստուգում ձեր դպրոցում կամ վերապատրաստման դասընթացի անցկացման վայրում լիազոր ներկայացուցչի կողմից՝ լրացնելով հավելյալ հարցաթերթիկ:

Կարևոր է. Հնարավորինս շուտ լրացրեք և վերադարձրեք բոլոր ձևաթղթերը և հասանելի եղեք ձեր նշանակված հեռախոսային հարցազրույցի համար, որպեսզի EDD-ն կարողանա որոշել CTB-ին մասնակցելու ձեր իրավունակությունը:

Դիմելուց հետո

EDD-ն ձեզ կուղարկի *Notice of Determination*, DE 1080 (Ծանուցագիր որոշման մասին), որտեղ նշված կլինեն ձեր իրավունակությանը վերաբերող արդյունքները: Եթե CTB-ին մասնակցելու իրավունակ եք, ծանուցագիրը կբացատրի ձեր իրավունքներն ու պարտականությունները:

Եթե CTB-ին մասնակցելու իրավունակ չեք, կարող եք շարունակել UI նպաստներ ստանալ, քանի դեռ հաճախում եք դպրոց կամ վերապատրաստման դասընթացի: Սակայն EDD-ն պետք է պարզի՝ արդյոք հասանելի եք աշխատանքի համար, ակտիվորեն աշխատանք եք փնտրում, ցանկություն ունեք աշխատանք ընդունելու, և արդյոք բավարարում եք իրավունակության բոլոր մյուս պահանջները:

Կարևոր է. Դպրոց կամ վերապատրաստման դասընթացի հաճախելու ընթացքում պետք է շարունակեք հաստատել UI նպաստներ ստանալու ձեր իրավունակությունը: Հաճախման ամսաթվերի կամ վերապատրաստական ծրագրի փոփոխությունների դեպքում այդ մասին տեղեկացրեք EDD-ին:

Վերապատրաստման դասընթացի երկարաձգումներ

Եթե CTB-ին մասնակցելու իրավունակ եք, ապա հնարավոր է նաև, որ ունենաք վերապատրաստման դասընթացի երկարաձգման իրավունք՝ ավելի երկարաժամկետ դպրոցական կամ վերապատրաստական ծրագրեր ավարտելու համար: Կարող եք գումար ստանալ ձեր UI հայցի շաբաթական նպաստի գումարի առավելագույնը 52-պատիկի չափով, ներառյալ ձեզ վճարման ենթակա կանոնավոր կամ երկարաձգված UI նպաստները: Վերապատրաստման դասընթացի միայն մեկ երկարաձգում է թույլատրվում CTB-ի կողմից հաստատված յուրաքանչյուր վերապատրաստական ծրագրի համար:

Որակավորված վերապատրաստական ծրագրերի տեսակներ

CTB-ի պահանջներին համապատասխանելու երկու ճանապարհ կա: Կարող եք մասնակցել ստորև թվարկված նախահաստատված վերապատրաստական ծրագրերից որևէ մեկին կամ կազմակերպել ձեր ինքնուրույն մասնակցությունը իրավական չափանիշներին համապատասխանող վերապատրաստման դասընթացի:

Նախահաստատված վերապատրաստական ծրագրեր

Վերապատրաստման դասընթացների իրավունակ կազմակերպիչների ցուցակ (Eligible Training Provider List, ETPL)

Կալիֆոռնիա նահանգի ETPL ցուցակը նահանգի կողմից հաստատված վերապատրաստման դասընթացների կազմակերպիչների ցուցակ է, ովքեր համապատասխանում են «Զբաղվածության ոլորտում նորարարությունների և նոր հնարավորությունների մասին» դաշնային օրենքի (Federal Workforce Innovation and Opportunity Act, WIOA) չափանիշներին: ETPL-ը ներառում է մեծ թվով կրթական ծրագրեր, այդ թվում՝ դասարանային և առցանց դպրոցական կամ վերապատրաստական ծրագրեր:

ETPL ցուցակում ընդգրկված կազմակերպիչ որոնելու համար այցելեք **www.caljobs.ca.gov** կայքը: Ընտրեք **More Career Services** (Կարիերայի զարգացման այլ ծառայություններ) հղումը՝ CalJOBS℠ համակարգ մուտք գործելու համար: Գտեք **Education Services** (Կրթական ծառայություններ) ներդիրը և ընտրեք **Training Providers and Schools** (Վերապատրաստման դասընթացների կազմակերպիչներ և դպրոցներ) հղումը:

«Զբաղվածության ոլորտում նորարարությունների և նոր հնարավորությունների մասին» օրենք (Workforce Innovation and Opportunity Act, WIOA)

Դաշնային WIOA օրենքը աշխատանք փնտրողներին զբաղվածության, կրթության, վերապատրաստման և այլ օժանդակ ծառայությունների համար տրամադրում է ծառայություններ կամ ֆինանսավորում կամ և՛ մեկը, և՛ մյուսը, որպեսզի նրանք կարողանան աշխատանք գտնել:

Առևտրի կարգավորման հարցերում օգնության ծրագիր (Trade Adjustment Assistance, TAA)

Դաշնային TAA ծրագիրն օժանդակում է այն աշխատողներին, ովքեր արտաքին առևտրի կամ արտադրությունն այլ երկրներ տեղափոխելու արդյունքում կորցրել են կամ կարող են կորցնել իրենց աշխատանքը:

Աշկերտական վերապատրաստման դասընթացներ

Աշկերտական ծրագրերը կարող են ներառել առանց վճարովի աշխատանքից կտրվելու վերապատրաստման դասընթացներ և բարձր պահանջարկ ունեցող աշխատանքների հմտություններ ձեռք բերելու և աշխատելուն զուգահեռ կրթական կրեդիտներ վաստակելու այլ հնարավորություններ:

Աշկերտական ծրագրերի մասին ավելին իմանալու համար այցելեք Կալիֆոռնիա նահանգի Արտադրական հարաբերությունների դեպարտամենտ (California Department of Industrial Relations), Աշկերտական չափորոշիչների բաժանմունք (Division of Apprenticeship Standards), համացանցային հասցեն՝ **www.dir.ca.gov/DAS**:

Գործատուների վերապատրաստման խումբ (Employer Training Panel, ETP)

Կալիֆոռնիայի ETP խումբը գործատուներին ֆինանսավորում է տրամադրում անհատականացված վերապատրաստման համար, որն ուղղված է իրենց աշխատողների հմտությունների կատարելագործմանը:

Կալիֆոռնիա նահանգի «Անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների նյութական օգնություն և աշխատանքի տեղավորում» (California Work Opportunity and Responsibility to Kids, CalWORKs)

CalWORKs ծրագիրը աշխատանքի և վերապատրաստման հնարավորություն է տալիս CalWORKs-ում ընդգրկված իրավունակ անհատներին:

Արհմիության, առևտրային կազմակերպության կամ գործատուի կողմից հովանավորվող վերապատրաստման դասընթացներ

Արհմիության կամ առևտրային կազմակերպության ենթավարպետի մակարդակի անդամները և գործատուի կամ գործատուների ասոցիացիայի կողմից հովանավորվող մասնակիցները կարող են նախահաստատված լինել CTB-ին մասնակցության համար: Վերապատրաստումը պետք է առնչվի արտադրությանը և անհրաժեշտ լինի ձեր աշխատանքը պահպանելու կամ աշխատանք ձեռք բերելու հարցում ավելի մրցակցային դառնալու համար:

Ուսուցման հավատարմագրված ծրագիր

Հանրակրթական դպրոցների որոշ ուսուցիչներ կարող են EDD-ի վավերացմամբ նախահաստատված լինել մաթեմատիկայի, գիտության կամ հատուկ կրթության ոլորտում մեկ առարկայի ուսուցման հավատարմագրված K-12 ծրագրերի համար: Ծրագիրը պետք է հաստատված լինի Ուսուցիչների հավատարմագրման հարցերով հանձնաժողովի (Commission on Teacher Credentialing) կողմից:

Ինքնուրույն մասնակցություն վերապատրաստման դասընթացներին

Եթե կազմակերպում և ֆինանսավորում եք ձեր ինքնուրույն մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, ապա կարող եք ունենալ CTB-ից օգտվելու իրավունք, քանի դեռ համապատասխանում եք իրավական չափանիշներին: Մեծ մասամբ, պետք է գործազուրկ լինեք առնվազն չորս շաբաթ՝ տեղական աշխատանքի շուկայում ձեր ներկայիս հմտությունների նկատմամբ պահանջարկի բացակայությամբ պայմանավորված:

Պետք է բավարարվեն հետևյալ բոլոր չափանիշները, եթե ինքներդ եք կազմակերպում և ֆինանսավորում ձեր մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին: Դպրոցը կամ վերապատրաստումը պետք է՝

- առնչվի մասնագիտությանը կամ հմտությանը, որը պահանջված է Կալիֆոռնիայի աշխատանքի շուկայում, որտեղ մտադիր եք աշխատանք որոնել.
- հավատարմագրված լինի Միացյալ Նահանգների Կրթության նախարարության (United States Department of Education) կամ Կալիֆոռնիա նահանգի Հետմիջնակարգ մասնավոր կրթության վարչության (California Bureau for Private Postsecondary Education) կողմից.
- ավարտվի ողջամիտ ժամանակաշրջանում՝ սովորաբար 2 տարվա ընթացքում.
- լինի արտադրությունից կտրված (սովորաբար դա կազմում է շաբաթական առնվազն 20 ժամ կամ կիսամյակային կամ եռամսյակային 12 միավոր).
- լինի նախկինում որևէ CTB ծրագրի մասնակցելուց ավելի քան 3 տարի հետո:

Դուք պետք է կարողանաք հաջողությամբ ավարտել վերապատրաստական ծրագիրը, *նույնիսկ եթե UI նպաստների առավելագույն գումարը բավարար չէ վերապատրաստման ամբողջ ժամանակաշրջանի ծախսերը ծածկելու համար:*

Մասնագիտական վերապատրաստման ծախսեր

EDD-ն չի վճարում վերապատրաստման հետ կապված որևէ ծախս, ինչպիսիք են ուսման վարձը, վճարները, գրքերը, պարագաները կամ փոխադրումը: Բայց հնարավոր է, որ իրավունք ունենաք ստանալու այլ նահանգային, դաշնային կամ մասնավոր ֆինանսական օգնություն: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.studentaid.ed.gov** կայքը:

Կարիերայի պլանավորում և ռեսուրսներ

EDD-ն տրամադրում է առցանց և առերես ռեսուրսներ, որոնք ձեզ կօգնեն աշխատանք փնտրել և մասնագիտական զարգացման նպատակներն իրագործելու համար կատարելագործել ձեր հմտությունները:

EDD-ի Աշխատանքի շուկայի մասին տեղեկատվական տվյալների գրադարանը (Labor Market Information Data Library) տրամադրում է համացանցային տեղեկատվություն՝ ամենաարագ զարգացող աշխատանքներն արագորեն հետազոտելու, աշխատավարձերի մասին տեղեկատվությունն ուսումնասիրելու և տեղական աշխատուժի շուկան հասկանալու համար: Տվյալների գրադարան մուտք գործելու համար այցելեք **www.labormarketinfo.edd.ca.gov** կայքը:

The America's Job Center of California℠-ի (AJCC) գրասենյակներն անհատական օգնություն են տրամադրում աշխատանք փնտրողներին: Կարող եք օգնություն ստանալ ձեր հմտությունները գնահատելու, վերապատրաստման դասընթաց փնտրելու, աշխատանքի հնարավորություններ գտնելու, ինքնակենսագրական պատրաստելու և այլ հարցերով: AJCC-ի մոտակա գրասենյակը գտնելու համար այցելեք **www.edd.ca.gov/office_locator** կայքէջը:

Լրացուցիչ տեղեկություններ

CTB-ի, վերապատրաստման դասընթացի երկարաձգման նպաստների և դպրոցական կամ վերապատրաստական այլ ռեսուրսների մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելեք **www.edd.ca.gov/CTB** կայքէջը:

EDD-ի կողմից օրենքի և քաղաքականության կիրառման վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է առցանց՝ *UI Benefit Determination Guide* (UI Նպաստի վճարման վերաբերյալ եզրակացության ուղեցույց), «Այլ դրույթներ» հատորի 85-րդ բաժնում՝ **www.edd.ca.gov/UIBDG** կայքէջում:

Employment Development Department
State of California

www.edd.ca.gov

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն 1-866-490-8879 (ձայնային) համարով զանգահարելու միջոցով:
TTY օգտագործողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիայի Կոմուտատորային ծառայության (California Relay Service) 711 համարով: